պարզել. արեւելեան պատի վերայ լուսամուտի աջ կողմից ոմն Գրիգոր կատէպանի արձանագրութիւնն է (պատկ. 8) լուսամուտի կողքին.

> Ես Գրիգոր կատէպանս էտու ։ խ ։ դՀ̃ ։ ի սբ̃ ու | խտս եւ սպասաւորքս գրեցին ։ բ ։ ժամ ։ ի տ | արոջն կատարիչքն աւրհնին յի̃ս ամէն ։ [1]

Ո՞վ է այս Գրիգոր կատէպանը։ Յայտնի է, որ Բագրատունեաց անկումից անմիջապէս յետոյ՝ Անիի կառավարիչներ նշանակուեցան մի շարք բիւզանդական պաշտօնեաներ՝ կատապան (καταπαν) տիտղոսով. դոցանից վերջիններն էին «Բագարատ հայրն Սմբատայ և Գրիգոր որդի Բակուրանին, վրացի ազգաւ», որոնց ձեռքից Արփասլանը խլեց Անին[2]։ Կատէպան և կատապան բառերը արտաքին կազմութեամբ մօտ են իրարու և նոյնանալ կարող են. բայց նո՞յն են նրանք այստեղ և ըստ նշանակութեան. ժողովրդական գաւառաբարբառի հետ կապուած չէ՞ ընծայաբեր Գրիգորի այդպիսի կոչումը։ Արարատեան բարբառով «կատէպան» նշանակում է այգեպան. հետևեալ գլխի մէջ կ'տեսնենք «չպետ» Գրիգորի արձանագրութիւնը, որ հովիւ է նշանակում։ Ինչպէս էլ լինի, այս արձանագրութիւնը ապացոյց չէ, թէ եկեղեցու հնութիւնը մինչև ԺԱ. դար կարող է հասնել. հնագրական տեսակէտներով նա համապատասխան է ԺԳ. դարին. տառերի քանդակման եղանակից և ձևերից զատ՝ աչքի են ընկնում բազմաթիւ կցուածքները (ligature) այս փոքրիկ արձանագրութեան մէջ, որ բացի «յի̃ս» և «ամէն» բառերից, որոնք աւելի հին են, յատուկ են ԺԳ. դարին, և շատ հազուագիւտ աւելի վաղ ժամանակների համար. եթէ իրօք այս արձանագրութիւնը Բակուրանի որդի Գրիգորինն է, նշանակում է արտագրուած է այն՝ ԺԳ. դարում հին վաւերագրերից, և եկեղեցու ծագման համար նշանակութիւն ունենալ կարող չէ։

Այս եկեղեցուն՝ հարաւային կողմից՝ կցուած է մի այլ երկարաւուն մատրաձեւ շէնք, որ ծածկել է նրա մի արձանագրութեան կէսը, լաւագոյն ապացոյցը, որ աւելի յետոյ է ծագել։ Մի յիշատակարանի համաձայն՝ ՉՀ = 1321 թուին[1] «Կարապետ որդի Տիրատրոյ ի շահաստան դղեկէս Պառնոյ» մի աւետարան է նուիրել «ի մեր նորաշէն եկեղեցին ի սբ̃ Կարապետն», որ կարծում ենք այս մատուռը պիտի լինի (պատկ. 5 և 6). շինութեան արձանագրութեան մի մասը միայն ընկած է ցած, միւս մասերը կորած. այս սուրբ Կարապետը չը պէտք է շփոթել ՈԿԲ = 1213 թուին շինուած գերեզմանական խաչքար՝ նոյնանուն մատրան հետ, որ Գրիգորէս և իւր աշակերտակիցները կանգնել են իրենց ուսուցիչների յիշատակին պարսպից դուրս, արեւելեան կողմը, բաւական հեռաւորութեան վերայ. նորա մօտ է և մի այլ խաչքար–մատուռ, ԺԳ. դարի սկզբից, որոնց մասին խօսք կ'լինի հետևեալ գլխի մէջ (պատկ. 11, 13)։

Ե.

Այժմ փորձենք ի մի ամփոփել այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են վանքի և դորա հետ Ամենափրկիչ սրբութեան պատմութեան, որով կարևոր ապացոյցը տուած կ'լինենք, թէ անընդհատ պահուել է այն իւր տեղում մինչև ԺԸ. դարի կէսերը և ապա փոխադրուել Էջմիածին, ուր և մնում է այժմ։

Մազխարոսից յետոյ՝ աւելի քան մի դար որ և է տեղեկութիւն չունինք ոչ վանքի և ոչ փրկչական պատկերի մասին, բացի 1081 թուականի այն փոքրիկ խաչքարի արձանագրութիւնից (պատկ. 4), որ մէջ բերինք նախընթաց գլխի մէջ։ Ո՞վ է Սմբատայ որդի Հասանը, դժուար է ասել, բայց հակուած ենք Պահլաւունեաց տան պատկանող մի անձի յիշատակ համարել այդ խաչը, որոնք ամենայն հաւանականութեամբ պահպանել են իրենց իշխանական եւ հոգեւոր կապը

(1) Ընդգծուած տառերը կցուած են այստեղ եւ ուրիշ տեղերում։

(2) Ուռհայեցի. Վաղարշ. 1898. 148։ Ալիշան. Շիրակ. 97։ Մանրամասնութիւններ Գրիգոր Բակուրանի մասին Nic. Jac. Marr. Arkayn, Mongolskoe Nesranié Xristian. S. Peters. 1905. 20 եւ շար.։

(1) Տ. Աւետիքեան Սմբատ. Ցուցակ Ն. Ջուղայի N 154 (= N 34 Ամենափրկիչ վանքի)։